

**ԳԵՂԱՄԱԿԱՆԻ ԽՈՍՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ԴԻՐՔԸ «ՈՒՄ» ԵՎ «ԿԸ»  
ՃՅՈՒՂՆԵՐԻ ԲԱՐԲԱՈՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

**Ռ. Գ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

Հայերենի բարբառների ուսումնասիրությունը միշտ էլ եղել է լեզվաբանների ու շաղրության կենտրոնում: Դարերի ընթացքում բնակչության արմատական տեղաշարժերի հետևանքով երբեմն խառնվել են մի քանի բարբառներ՝ ձևավորելով հետաքրքիր ենթաբարբառներ ու խոսվածքներ, որոնք դեռևս ուսումնասիրության կարիք ունեն և դուրս են մնացել մեր բարբառագետների ուշադրությունից: Այս առումով, կարծում ենք, բարբառագիտության համար մի հետաքրքիր խոսվածք է ներկայացնում Սևանի շրջանն իր հարակից գյուղերով, որոնք բնակչությունը գաղթել է Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից:

Քննելով այդ գյուղերից մեկի՝ Գեղամավանի խոսվածքը՝ մեր նպատակն է պարզել, թե ինչ բարբառով է խոսում այսօրվա Գեղամավանի բնակչությունը և, որպես բարբառային միավոր, հետագա զարգացման ինչ միտում ունի:

Ասենք, որ Սևանի շրջանի Գեղամավան գյուղը (մինչև 1946թ. Ծաֆրիզ) գտնվում է շրջկենտրոնից 7 կմ արևմուտք՝ Հրազդան գետի ձախ ափին: Գյուղը հիմնադրվել է 1828-29 թթ. Մակուի շրջանի Աճռուկ գյուղից, Սալմաստից, Խոյից, Մուշից, Ալաշկերտից և Հին Բայազետից գաղթած 62 հայ ընտանիքների կողմից: Ինչպես պարզ երևում է բնակչության կազմից, այստեղ խառնվել են մի քանի բարբառներ, և մեզ հետաքրքրում է դրանց առանձին շերտերի բացահայտումը:

Խոսվածքի վերլուծության համար հիմք ենք ընդունել Գ. Զահուկյանի՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը՝ նրա առաջարկած բարբառային 100 հատկանիշներից ընտրելով միայն քննարկվող խոսվածքին բնորոշները<sup>1</sup>:

Առաջնորդվելով այս մեթոդով՝ ներկայացնում ենք Գեղամավանի խոսվածքի մոտ 25 հնչյունական և ձևաբանական առանձնահատկություններ: Խոսվածքի բաղաձայնական համակարգին բնորոշ են հետևյալ կարևոր հատկանիշները.

1. Հայերենի մի շարք բարբառներում տարածված բաղաձայնների քառաստիճան համակարգը (բ>բ' պ>պ') առկա է նաև այստեղ, որտեղ բառակզրի ձայնեղ բաղաձայնները վերածվել են շնչեղ ձայնեղների, ինչպես՝ *դեղ-դ իէղ, դատարկ-դ անդանգ* և այլն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ինչպես հայերենի շնչեղ ձայնեղներ ունեցող մյուս բարբառներում (Արարատյան, Կարնո, Մշո, Ջուղայի, Ուրմիո), այնպես էլ այստեղ շնչեղ ձայնեղները իմաստազատիչ դեր չեն կատարում և, փաստորեն, պայթական ձայնեղների շնչեղացած տարբերակներն են բառակզրում;

2. Բառամիջում և բառավերջում, ինչպես նաև ի-ից հետո ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները վերածվում են շնչեղ խուլերի, ինչպես՝ *վերջ-վիէռչ, բարձ-բ'անց, խաբել-խափիէլ* և այլն:

3. Բառամիջում, բառավերջում և ի-ից հետո խուլ պայթականները և կիսաշփականները վերածվում են ձայնեղ պայթականների և կիսաշփականների, ինչպես՝ *գետիճ-գ նեդիճ, մուկ-մուճ, կատու-կադու, պարապ-պարաբ, սիրտ-սիռո, մածուն-մածուն, կոճակ-կոջագ* և այլն:

4. Բառամիջում և բառավերջում շնչեղ խուլերը ապաշնչեղանում են՝ վերածվելով խուլերի, ինչպես՝ *շունչ-շունճ, դունչ-դ ունճ, հասցնել-հասճընիէլ, քաղաք-քաղակ* և այլն:

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:

5. Բաղաձայններից առաջ կիսաշփակաճները վերածվում են շփակաճների, ինչպես՝ *աչք-յհաշկ, ամեծք-ամեսկ, մեքք-մեշկ* և այլն:

6. Բառասկզբում ձայնավորներից առաջ ական է *յ (յհ)* հավելական շունչը, ինչպես՝ *ամեն-յհրմեն, աժան-յհէժան, աղբյուր-յհախտուր, անցնել-յհրանել* և այլն:

7. Ինչպես գիտենք, Ուրմիայի բարբառում բառասկզբի գրաբարյան հ-ն վերածվում է յ-ի: Հ-յս փոփոխությունը թեև ընդհանրացված չէ, բայց պահպանված է Գեղամավանի խոսվածքում, օրինակ՝ *հազ-խազ, հող-խուող* և այլն:

Խոսվածքում հանդիպում է նաև հ-ֆ հնչյունափոխության դեպք (*հոտ-ֆուտ*), բայց այս երևույթը կամաց-կամաց դուրս է գալիս լայն կիրառությունից: Սևանի շրջանի մյուս գյուղերում հ-յս և հ-ֆ հնչյունափոխություններն ավելի ընդհանրացված են ու տարածված, որն էլ մեզ հիմք է տալիս կարծելու, որ այստեղ և մի շարք այլ դեպքերում մեծ դեր է կատարում ազգաբնակչության թվային կազմը՝ կախված վերը նշված գաղթավայրերից (նայած, թե որ գյուղում որ գաղթավայրի բնակչությունն է մեծամասնություն կազմում): Եվ մի շարք երևույթների լայն կիրառությունը կամ նրանց մահացումը ոչ այնքան կախված է գրական լեզվի ազդեցությունից, որքան բնակչության գերակշռություն կազմող մասից՝ ըստ իրենց գաղթավայրերի:

Այդ առումով Գեղամավանի խոսվածքի վերլուծությունը ցույց տվեց, որ Ուրմիայի և ընդհանրապես պարսկահայոց բարբառների ազդեցությունը և շերտը ավելի թույլ են, որովհետև բնակչության մեծ մասը այստեղ է գաղթել Ալաշկերտից, Մուշից և Հիմ Բայազետից, իսկ այս բարբառների մեծ ազդեցությունն արդեն ակնհայտ է խոսվածքում:

8. Խոսվածքում ական է նաև հայերենի համար ոչ սովորական կ' հնչյունը, ինչպես՝ *դսմաթ-կ'ըմիէտ, դարիր-կ'արիր, կարն-կ'առչ* և այլն:

Գեղամավանի խոսվածքի ձայնավորային համակարգը բնութագրվում է հետևյալ կարևոր հատկանիշներով.

9. *այ* երկհնչյունը հնչյունափոխվում է *է-ի*, ինչպես՝ *հայր-հէր, այս-էս, եղբայր-ախպեր, մայր-մէր* և այլն:

10. *ե* ձայնավորի դիմաց բառամիջում ական է *իէ* երկբարբառը, ինչպես՝ *վերջ-վիէռչ, խելք-խիէլկ, տեղ-տիէղ* և այլն:

11. *ո* ձայնավորի դիմաց ական է *ուօ* երկբարբառը, ինչպես՝ *փող-փուօղ, փոր-փուօր, խմոր-խըմուօր* և այլն:

12. Մի շարք միավանկ բառերում *ե-ից* առաջ տեղի է ունենում *չ-ի* հավելում, ինչպես *եզ-յիէզ, ես-յիէս, երգ-յիէրք* և այլն:

13. Բառասկզբում *ո-ից* առաջ տեղի է ունենում *«շրթնային տարրի»* հավելում (*ո-վէ, ուօ*), ինչպես՝ *որ-վէր, որբ-վէռփ, ոխ-վէխ* և այլն:

14. Մի շարք բառերում տեղի է ունենում *ա* ձայնավորի քմայնացում, ինչպես՝ *դանակ-դ'աննօզ, ձագ-ձ'նք, աչք-յհնշկ* և այլն:

Բառամիջում միավանկ և բազմավանկ բառերի ձայնավորների քմայնացումը բնորոշ է Նոր Բայազետի, Ուրմիայի բարբառներին և գործում է միշտ: Իսկ Գեղամավանի խոսվածքում ձայնավորների քմայնացումն ավելի քիչ օրինակների վրա է տարածվում՝ չենթարկվելով ոչ մի օրինաչափության (մի դեպքում՝ *գարի-գ'արի, ձավար-ձ'ավար*, մյուս դեպքում՝ *ձագ-ձ'նք, դատարկ-դ'նդնօզ*), որը մենք երևույթի մահացման հետ ենք կապում:

Ձևաբանական համակարգում խոսվածքը բնութագրվում է հետևյալ կարևոր հատկանիշներով.

15. Հոգնակերտ մի քանի մասնիկների (*եր, երք, արենք, ռանք*) անկայություն, ինչպես՝ *տղա-տըղէրք, պինչ-պընճերք, տուն-տըներ, այստեղ-ըստիէղրանը/ըստիեղարենք* և այլն:

16. *Ն(եր)*-ով հոգնակիի և ի հոլովման անկայություն, ինչպես՝ *գող-գ'ուօղերի, տուն-տըների, աշակերտ-աշագիէղների* և այլն:

17. Խոսվածքում բացառական հոլովը կազմվում է *ծ*-ով *ց*-ծ հնչյունափոխությամբ, ինչպես՝ *սար→սարից→ծ, ծով→ծովից→ծ, քար→քարից→ծ* և այլն:

18. Ներգոյական հոլովի անկայություն, որը մեր կարծիքով, Արարատյան բարբառի ազդեցություն է, ինչպես՝ *գիրք-գ'ըրկում, գյուղ-գ'իէղում* և այլն:

19. Առկա են նաև իկ(զ)-ով դերանվանական ձևեր, ինչպես՝ *իճձ-ըճճիզ, քեզ-քիէ-զիզ, այս-էսիզ* և այլն:

20. Ցուցական դերանունների թեք հոլովաձևերում *տ, դ, սրա* մասնիկների հավելում, ինչպես՝ *սրա-ըստրա, նրա-ընդրա, սրանք-ըստրանք, ըստոճկ, նրանք-ընդրանկ* և այլն:

21. Գեղամավանի խոսվածքում վաղակատար դերբայը կազմվում է *ր*-ով, որը բնորոշ է *«կը»* ճյուղի (*Մշո*) բարբառներին, ինչպես՝ *բերել-բ'երեր, ուզել-ուզեր, գրել-գ'ըրեր* և այլն:

22. Խոսվածքում առկա է նաև հարակատար դերբայի ուզ(ուկ)-ով կազմություն, որը նույնպես *«կը»* ճյուղի բարբառներին բնորոշ հատկանիշ է, ինչպես՝ *կապած-կարուզ, մատած-մրատուզ, կերած-կերուզ* և այլն:

23. Օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի է-ի դիմաց առկա է *ա*-ով ձև, ինչպես՝ *գ'իրկ ա, ուղըմ ա, գ'ըրըմ ա* և այլն:

24. Խոսվածքում օժանդակ բայի անցյալ անկատարի գրական էի, էիր, էիք, էիք, էի՞ք ձևերի դիմաց ունենք է-ի սղումով (*ի, իր, ինք(կ), իք(կ), ի՞ք*) ձևեր, ինչպես՝ *սիրըմ իր, սիրըմ ինկ, սիրըմ իկ, սիրըմ ին* և այլն:

25. Ե խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալը կազմում են ոչ թե ցույական, այլ արմատական հիմքով, ինչպես՝ *գ'ըրի, գ'ըրիր, գ'ըրեժ, գ'ըրիճկ, գ'ըրիկ, գ'ըրիճ* և այլն:

Ձևաբանական կարևոր հատկանիշներից մշեք նաև, որ միավանկ *գալ, լալ, տալ* բայերի անկատարը Նոր Հայագետի բարբառի մեծ կազմվում է *ու* մասնիկով՝ ում-ըմ հնչյունափոխությամբ, ինչպես՝ *գալըմ, լալըմ, տալըմ*:

Իսկ չեղ վերջավորության դիմաց խոսվածքում ունենք միայն *անչ*, որն ավելի շատ բնորոշ է Ուրմիայի բարբառին, ինչպես՝ *փախչել-փախանչ, թռչել-թրոնչ, կպչել-կըրնչ* և այլն: Այժմ, հետևելով Գ. Ջահուկյանին, ներկայացնում ենք մի հասկանալիության աղյուսակ՝ ճշտելու համար Գեղամավանի խոսվածքի դիրքն ու առնչությունները այն բարբառների հետ, որոնք ընկած են նրա կազմության հիմքում կամ արդյունք են հետագա ազդեցությունների:

Աղյուսակը ներկայացնում ենք հերթականությամբ՝ ըստ վերը քննարկված 25 հնչյունական ու ձևաբանական հատկանիշների:

± նշանով ներկայացնում ենք բարբառային այն հատկանիշները, որոնք արդեն գտնվում են մահացման եզրին կամ քիչ են տարածված:

	Գ. խ	Կամո	Մուշ	Այաշկերս	Ուրմիա	Ջուղա	Թավրիզ	Երևան
1. քաղ-քառ. համ (ք' ք պ փ)	+	+	+	-	-	-	-	+
2. ճայնեղ վեր. շօ. խոսիների	+	+	+	-	-	-	+	+
3. խոսիների վեր. ճայնեղ-ի	+	±	+	+	-	±	-	±
4. ճնչ. խոսվ. վեր. խոսիների	+	±	-	+	+	-	±	+
5. կիսաշփ վեր. շփականների	+	+	-	-	+	±	+	-
6. ք-սկ-ում յ' (յի)-ի առկ.	+	+	+	+	+	+	+	-
7. ք. սկ.-ում հ-ի վեր. խ-ի	±	+	-	-	+	+	+	-
8. կոկ. կ <sup>0</sup> հնչ.-ի առկ	+	+	-	-	+	-	+	-
9. այ-ի հնչ.-ն է-ի	+	+	+	+	+	-	-	-
10. ե-ի դիմ. իէ-ի առկ.	+	+	+	-	+	-	-	-
11. ո-ի դիմ. ուօ նրկբար.	+	+	+	-	+	+	+	+
12. ե-ից առ. յ-ի հավ.	+	+	+	+	+	+	+	+
13. քառասկ. ո-ի դիմ. վէ, ուօ	+	±	+	-	+	-	-	-
14. ա ճայն. քմայն. (ա)	±	+	-	-	+	-	-	-
15. հոգնակներտ եր. եր+ք. արնք. քունք մասն. առկ.	+	+	+	-	+	+	+	+
16. ճ(եր)-ով հոգն. և ի հոլ. առկ.	+	+	-	-	+	+	+	+
17. քաց-ի ց-ով կազմ.	+	+	-	+	-	+	+	+
18. ճերգ. հոլովի առկ.	+	+	-	-	-	+	+	+
19. իկ(զ)-ով դերանվ. ձևեր	±	+	+	+	-	-	-	-
20. ա. դ. սրա մասն հավ. ցուց. դերանուններում	+	+	+	+	+	-	+	+
21. վաղ. դերբ. -ի ր-ով կազմ.	+	+	+	+	+	-	-	-
22. հարակ. դերբ.-ի ուկ-ով կազմ.	+	+	+	+	-	-	-	-
23. 3-րդ դեմքի է-ի դիմ. ա-ով ձև.	+	+	-	-	-	-	+	+
24. օժ. բայի անց. անկ.-ի է-ի սղումով ձևեր (ի, իր, իք)	+	+	+	+	-	-	+	+
25. ե խոն պարզ բայերի արմ. հիմք	+	-	+	+	-	-	+	-

Որպես համեմատության եզր ընտրել ենք Մշո, Ալաշկերտի, Գավառի (Նոր Բայազետ), Երևանի բարբառները: Պարսկահայոց բարբառների շերտն ու ազդեցությունն ավելի ստույգ որոշելու համար համեմատության տախտակում բերել ենք մի քանի բարբառներ՝ Ուրմիա, Ջողա, և Թավրիզ:

Ինչպես պարզ երևում է տրված աղյուսակից, իր հնչյունական համակարգով Գեղամավանի խոսվածքը գրեթե չի տարբերվում Մշո և Նոր Բայազետի բարբառներից, իսկ նոր Բայազետի բարբառն իր հերթին ձևավորվել է Մշո բարբառից: Ինչպես նկատել է Ա. Ղարիբյանը. «Արարատյան բարբառը, խառնվելով Մշո բարբառի արևելյան և հյուսիսարևելյան (Արճեշ) հատվածին, տվել է Նոր Բայազետի ենթաբարբառը, որին պատկանում են նաև Ախտալի շրջանի մի շարք գյուղերի խոսվածքները»<sup>2</sup>:

Գեղամավանի խոսվածքը «կը» ճյուղի, մասնավորապես Մշո բարբառին մոտենում է նաև ձևաբանական մի շարք հատկանիշներով (վաղակատարի ռ-ով կազմություն, հարակատարի ուզ (ուկ)-ով կազմություն և այլն):

Սակայն հաշվի առնելով բարբառների ձևաբանական դասակարգումը և ելնելով սահմանական ներկայի կազմությունից՝ պետք է ասել, որ Գեղամավանի խոսվածքն ավելի մոտ է կանգնած «ում» ճյուղի բարբառներին: Ինչպես գիտենք, բարբառների ձևաբանական դասակարգման հիմքում ընկած է սահմանական ներկայի կազմությունը: «Ում» ճյուղի բարբառները «ներկան կազմում են ում վերջավորություն ունեցող անկատար դերբայով, որը հնչյունափոխության հետևանքով կամ ներդաշնակության օրենքով հաճախ դառնում է *իմ, ըմ, ամ, իւմ* և այլն»<sup>3</sup>:

Գեղամավանի խոսվածքում ևս սահմանական ներկան կազմվում է ում-ի հնչյունափոխված (ըմ) տարբերակով, որն էլ մեզ հիմք է տալիս Գեղամավանի խոսվածքը գետնելու «ում» ճյուղի բարբառների շարքում:

«Ում» ճյուղի բարբառներին Գեղամավանի խոսվածքը հարում է նաև ձևաբանական մի շարք այլ կարևոր հատկանիշներով (բացառական հոլովի ծ (ց-ծ)-ով կազմություն, ներգոյական հոլովի առկայություն, օժանդակ բայի անցյալի ձևերի մեջ (էի, էիր, էր) արմատական է-ի սղում և այլն):

Չնայած բնակչության փոքրամասնությանը՝ խոսվածքը կրում է նաև պարսկահայոց բարբառների ազդեցությունը, որը նույնպես շատ պարզ երևում է վերը բերված աղյուսակում:

Այսինքն՝ Գեղամավանի խոսվածքը, ձևավորվելով տարբեր բարբառների հիմքից, ունի մի շարք ընդհանրական հատկանիշներ, որոնք բնորոշ են համեմատության եզր ընտրված բոլոր բարբառներին (ձայնեղների վերածումը շնչել խուլերի, բառամիջում օ-ի դիմաց ուօ երկբարբառի առկայություն, միավանկ բառերում ե-ից առաջ յ-ի հավելում, հոգնակերտ եր, երք, արենք, թանք մասնիկների առկայություն, ցուցական դերանունների թեք հոլովաձևերում տ, դ մասնիկների հավելում, օժանդակ բայի անկատարի է-ի սղում): Մի շարք հատկանիշներ էլ ավելի մասնական են և բնորոշ են միայն Մուշի ու Նոր Բայազետի բարբառներին (բաղաձայնների քառաստիճան համակարգ, խուլերի վերածում ձայնեղների, բառակազմում ձայնավորներից առաջ յթ-ի հավելում, իկ(զ)-ով դերանվանական ձևեր, այ-ի հնչյունափոխություն է-ի, հարակատար դերբայի ուզ(կ)-ով կազմություն, վաղակատար դերբայի ռ-ով կազմություն և այլն):

Մի շարք հատկանիշներ էլ առկա են Նոր Բայազետի և Արարատյան, երբեմն էլ Ուրմիայի բարբառներում (ում (ըմ)-ով սահմանական ներկայի կազմություն, ներ-ով հոգնակի և ի հոլովման առկայություն, բացառականի ց (ծ)-ով կազմություն, ներգոյական հոլովի առկայություն և այլն): Որոշ հատկանիշներ էլ բնորոշ են միայն պարսկահայոց բարբառներին (կիսաշփականների վերածում շփականների, չել վերջավորության դիմաց միայն նել):

Եթե բերենք մեր քննարկած 25 հնչյունական ու ձևաբանական հատկանիշների համախառնությունը՝ ըստ համեմատվող բարբառների, ապա կստանանք մոտավորապես հետևյալ պատկերը.

<sup>2</sup> Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 219:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 216:

Կամո-24 հատկանիշ (14 հնչյունական, 10 ձևաբանական)  
Մուշ-16 հատկանիշ (9 հնչյունական, 7 ձևաբանական)  
Ուրմիա-18 հատկանիշ (12 հնչյունական, 6 ձևաբանական)  
Երևան- 13 հատկանիշ (6 հնչյունական, 7 ձևաբանական):

Այսպիսով, շատ կետերում շփման մեջ գտնվելով և՛ պարսկաճայոց, և՛ «կը», և՛ «ում» ճյուղերի բարբառների հետ՝ Գեղամավանի խոսվածքը քերականական հիմնական հատկանիշներով ավելի մոտ է կանգնած «ում» ճյուղի բարբառներին, և վերը նշված բարբառները (Մուշ, Ուրմիա, Նոր Բայազետ), խառնվելով Արարատյան բարբառի հետ, ձևավորել են մի յուրօրինակ խոսվածք, որը սերնդափոխության ընթացքում շատ քիչ փոփոխությունների է ենթարկվել:

*Ստորև թարգմանաբար ներկայացնում ենք խոսվածքի մի փոքրիկ մուշ՝ Հովհ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքից:*

Գ'յեղածի Համբոյի տունը կըրիվ էր հ'ընգե: Համբոս ուզըմ էր հ'իրա տասերգու տաբեգան Գ'իկորին տանի քաղակ, մէ գ'ոռծի տա, վէր մառտ դ'ւննա, աշխադանկ անի:

Կընիզը չէր համաձայնըվըմ:

-Չեմ ուզըմ, իմ քյոսպած էրէխիմ էն անիրավ աշխարը մի քիծ, չեմ ուզըմ,- լւնըմ էր կընիզը:

Բայծ Համբոն չըլըսած:

Մէ խաղաղ հ'ւնսւվող էր, մէ տըխտըր հ'ւնսւվող:

Տընէծիներն ու հարեվանները էգան միմեկ գ'յեղի ծերը, Գ'իկորի թըշերը պանին ու ճամբու դ'ըրին:

Քուրը՝ Ջանին, լւնըմ էր, իսկ պըզդի Գ'ալօսն մօր կուջաղիծ ձ'էն էր տալըմ. «Գ'իկու, էդ հ'ո'ւր ես էտըմ, հէ, Գ'իկու»:

Գ'իկորը շուր- շուր էր յեղ նայըմ: Տեներմ էր հ'ըլը գ'յեղի ծերին կայնած են ընդոնկ, ու մէրը ֆառտուգով սըռպըմ ա հ'աշկերը: Էլի մեզ էլ հօր կօղօվ վազըմ կամ հ'ւնէն էր հ'ընգընըմ: Յեղ նայեծ. գ'յեղը ծասկըվեր էր ք'ըլըրի հ'էդէվը: Յիեղօ Գ'իկորը յեղ էր հ'ընգընըմ:

- Հ'արի, հա, Գ'իկուր ջան, հ'արի հա', հասանկ հա',- տըղին կանճելով էտըմ էր Համբոն, շըլզին մէ խուշին, մէճը մէ քանի հած ու պանիր ու մէ էրգու դ'ւնստն թուտուն:

**Р. Г. САГАТЕЛЯН - *Говор Гезамавана и его место среди диалектов группы «ну» и «кը».*** - В статье представлен новый говор, образованный путем взаимодействия диалектов групп «ну» и «кը». На основании изучения целого ряда важных фонетических и морфологических признаков определяется место этого говора в выше-названной группе диалектов.